

**ՇՏԱԴՐՈՒԺՕԳՆՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ
ԵՆԹԱԴՐՎՈՂ ԻՆՍՈՒԼՏԻ ԺԱՄԱՆԱԿ**

Սույն գործունեության ընթացակարգի նպատակն է արդյունավետ դարձնել շտապբուժօգնության (ՇԲՕ) անձնակազմի աշխատանքը ենթադրվող ինսուլտի ժամանակ: Ընթացակարգը կազմված է ԱՄՆ Հյուսիսային Կարոլինայի ՇԲՕ 2012թ ուղեցույցների հիման վրա:Ուղեղի արյան շրջանառության սուր խանգարման (ՈԻԱՇՍԽ), ենթադրվող դեպքերում ՇԲՕ բժիշկը պետք է հետևի գործունեության ընթացակարգի ստորև ներկայացվող քայլերին.

1. Տեղանքի գնահատում

- 1) Գնահատել տեղանքի անվտանգությունը
- 2) Զննել տեղանքը տվյալ վատթարացման հետ հնարավոր կապ ունեցող իրերի առումով՝ դեղորայք, ներարկիչներ և այլ

2. Տուժածի վիճակի գնահատում և հիվանդության պատմության հավաքագրում

- 1) Զննել/ուշադրություն դարձնել հետևյալ նշանների վրա՝
 - ա.Գիտակցության խանգարումներ
 - բ.Վերջույթների թուլություն / պարեզ
 - գ.Դեմքի ծովածություն, կուրություն կամ այլ զգացողական խանգարումներ
 - դ.աֆազիա / դիզարթրիա
 - ե.սինկոպե /գլխապտույտ
 - զ.փսխումներ /գլխացավ
 - է.ցնցումներ /շնչառական խանգարումներ
 - ը.գերճնշում / թերճնշում

- 2) Հավաքագրել հիվանդության հակիրճ պատմություն
- ա. Նախկինում ՈւՎՇՍԽ, անցողիկ իշեմիկ գրոհ
 - բ. Նախորդող սրտային/անոթային վիրահատություններ
 - գ. Զուգակցող հիվանդություններ՝ դիաբետ, ԶԳ, կորոնար անոթների հիվանդություններ
 - դ. Նախասրտերի շողացում
 - ե. Դեղորայք՝ հակամակարդիչ
 - ը. Վնասվածքային պատմություն
 - Ճշտել երբ է սկսվել վիճակի տվյալ վատթարացումը կամ այն ժամանակը, երբ անձին վերջին անգամ տեսել են նորմալ վիճակում
 - Հավաքագրելով պացիենտի ախտանիշները, հիվանդության պատմությունը, տարբերակիչ ախտորոշում անցկացնել հետևյալ հիվանդությունների միջև՝
 - թ. Գիտակցության խանգարումներ
 - ժ. Հիպոգլիկեմիա, հիպերգլիկեմիա
 - ժա. ԳՈՒՎ
 - ժբ. Ուռուցքներ
 - ժգ. Թունավորումներ
 - ժդ. Եվ այլ

3) Բուժօգնություն տեղում և տեղափոխման ընթացքում

- ա. Ապահովել կենսական կարևոր ֆունկցիաները՝ շնչառություն, շնչուղիների անցանելիություն, սրտի աշխատանք (տես՝ ՍԹՎ ընթացակարգը)
- բ. Գիտակցության ընկճման (≤ 12 միավոր ըստ Գլազգոյի սանդղակի) դեպքերում՝
- գ. կիրառել ստորին ծնոտի հնարքը
- դ. տեղադրել Գվեդելի օդատար խողովակ/կոկորդային դիմակ
 - Միացնել թթվածին՝ 3-5 լ/ր

- Կատարել 12 արտածումային ԷՍԳ
- Որոշել և վերահսկել գյուկոզան արյան մեջ.

ե. ≤ 12 մմոլ/լ հիպերգլիկեմիան շտկման կարիք չունի

զ. ≤ 3.5 մմոլ/լ կամ աշխատանքային գլիկեմիայի ≥ 25% նվազման դեպքերում ներարկել 20-40 մլ 40% գլյուկոզայի լուծույթ

է. Գնահատել և վերահսկել հեմոգլինամիկան՝

- ՍԶՃ ≥ 200 մմսս կամ ԴՁՃ ≥ 120 մմսս առնվազն 3 տվյալ՝ գրանցված 5 րոպե ընդմիջումով՝ ն/ե ներմուծել Ուրապիդիլ 12.5-25 մգ
- Գերճնշման պահպանման դեպքում քննարկել հակահիպերտենզիվ դեղորայքի կրկնակի ներմուծումները միայն ն/ե կաթետեր տեղադրելուց հետո
- Արգելվում է ինսուլտի կասկածով պացիենտներին տալ ներընդունման դեղորայք

ը. Միացնել կարդոմոնիտոր

թ. Դիրքավորել պացիենտին՝ գլխատակը 35° բարձր

ժ. Հիշել ժամանակի գործոնի մասին՝ տեղում բուժօգնությանը տրամադրվող ժամանակը չպետք է գերազանցի 20-30 րոպեն

ժա. Տեղափոխման ընթացքում վերահսկել հետևյալ ցուցնիշերը՝ գիատկցության մակարդակը, բերի վիճակը, ՋՃ, պուլս, շնչառության հաճախականությունը

4) Տեղափոխման որոշման ընդունում

ա. Ինսուլտին համապատասխանող տվյալների դեպքում՝ շտապ տեղափոխում համապատասխան կաթվածային կենտրոն կամ մասնագիտացված բաժանմունք ունեցող բուժհաստատություն

բ. Իրազեկել պացիենտին և/կամ վերջինիս հարազատներին դեպքի հրատապության, սպասվող ռիսկերի և առաջարկվող գորողությունների պլանի վերաբերյալ և ստանալ գրավոր իրազեցված համաձայնություն

գ.Թիրախային բաժանմունքն/բուժհաստատության իրազեկում տվյալ պացիենտի վերաբերյալ ներառյալ՝ ԱԱՀ, տարիք, նախնական ախտորոշում, ենթադրյալ ժամանման ժամանակ

5) Փաստաթղթավարություն

- a. Կատարել պատշաճ գրանցումներ պացիենտի վիճակի և բուժօգնության վերաբերյալ, առաջնային զննման, տեղափոխման և բուժհաստատություն հասնելու փուլին
- b. Զեկուցել Կենտրոնական կայան դեպքի սպասարկման արդյունքների վերաբերյալ
- c. Բարդ, իրարամերժ կամ կոնֆլիկտային իրավիճակների վերաբերյալ զեկուցել անմիջական ղեկավարին

3.Հապավումներ

ՇԲՕ – Շտապբուժօգնություն

ՍԶՀ – սրտի զարկերի հաճախականություն

ԷՍԳ – էլեկտրասրտագրություն

ԶՃ – զարկերակային ճնշում

ԶԳ – զարկերակային գերճնշում

ՈՒԱՇՍԽ – ուղեղի արյան շրջանառության սուր խանգարում

ՍԶՃ – սիստոլիկ զարկերակային ճնշում

ԴԶՃ – դիաստոլիկ զարկերակային ճնշում

ԱԱՀ – Անուն Ազգանուն Հայրանուն

4.Շահերի բախման հայտարարագիր և ֆինանսավորման աղբյուրներ

Փաստաթղթի կազմման համար աշխատանքային խմբի անդամները ֆինանսական աջակցություն չեն ունեցել: Թիմի անդամները միմյանց կամ որևէ կազմակերպության հանդեպ շահերի բախում չունեն:

5.Գրականության ցանկ՝

- 1) Advanced Cardiovascular Life Support. American Heart Association. Provider manual. 2016. Available at: <https://ebooks.heart.org/product/acls-provider-manual-ebook-collection>
- 2) HIGHLIGHTS of the 2015 American Heart Association Guidelines Update for CPR and ECC. Available at: <http://www.cercp.org/images/stories/recursos/Guias%202015/Guidelines-RCP-AHA-2015-Full.pdf>
- 3) European resuscitation council Guidelines 2015. Available at: <https://cprguidelines.eu/>
- 4) M.F.Hazinski, BLS for healthcare providers. American Heart Association 2011
- 5) North Carolina Chapter of Emergency Physicians Protocol Committee, North Carolina Office of EMS (2012)